Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-762[2]-13.10.2020,07.12.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ կետերով.

2.12. թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գիտական եւ ուսումնական նպատակներով օգտագործում	բազային տուրքի 20-ապատիկի չափով
2.13. թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ փորձաքննության անցկացում՝ տարեկան	բազային տուրքի 20-ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Երկրորդ ընթերցում

Կ-762[2]-13.10.2020,07.12.2020-ԱՍ-011/2

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ կետերով.

2.12. թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գիտական եւ ուսումնական նպատակներով օգտագործում	բազային տուրքի 20-ապատիկի չափով
2.13. թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի	բազային

օգտագործմամբ փորձաքննության անցկացում՝ տարեկան	տուրքի 20-ապատիկի չափով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-762-13.10.2020-ԱՍ-011/1, «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-762[1]-13.10.2020-ԱՍ-011/1, ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-762[2]-13.10.2020-ԱՍ-011/1 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*ՀՀ Կառավարություն*	«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **Կ-762-13.10.2020-ԱՍ-011/1,** օրենքի նախագիծ **Հոդված 1,մաս 1-ին**	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունն անհրաժեշտ է համարակալել՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջների:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
2.	*ՀՀ Կառավարություն*	«Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» **Կ-762[1]-13.10.2020-ԱՍ-011/1** օրենքի նախագիծ Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում «աղյուսակում» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «1-ին բաժնի» բառերը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
3.	*ՀՀ Կառավարություն*	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» **Կ-762[2]-13.10.2020-ԱՍ-011/1** օրենքի նախագիծ Հոդված 1	Նախագծի 1-ին հոդվածում «բովանդակությամբ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «կետերով» բառը:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է: